Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի տնօրեն,
իրավաբանական գիտությունների թեկնածու
Լ. Ա. Ղազանչյան

24 հունիսի 2020թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ

ՌՈԶԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱԲԱՋՅԱՆԻ
«ԱՆՄԻՋԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԷՎՈԼՈՒՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ»
թեմայով

ԺԲ.00.01-«Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետաիրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող թեկնածուական ատենախոսությունը նվիրված է Հայաստանի պատմության նորագույն շրջանում անմիջական ժողովրդաիշխանության ձևերի ուսումնասիրությանը: Պաշտպանության ներկայացված ատենախոսության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում, քանզի ժողովրդավարության և հատկապես ժողովրդաիշխանության անմիջական ձևերի հիմնահարցը բոլոր պատմական ժամանակաշրջաններում մարդկությանը մշտապես հուզող և արդիական

հիմնահարցերից է: Ընտրված թեմայի արդիականությունն ակնհայտ է դառնում նաև Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության ընթացքում տեղի ունեցած և մինչ օրս էլ տեղի ունեցող իրավական, քաղաքական գործընթացների պայմաններում: Հետևաբար, կարող ենք փաստել, որ ատենախոսության թեման արդիական է թե՛ տեսական, թե՛ գործնական տեսանկյունից:

Հայաստանի Հանրապետությունում ժողովրդաիշխանության և դրա կատարելագործման ուղղությամբ կատարվող աշխատանքներ և բարեփոխումներ պետք է իրականացվեն մշտապես և անընդհատ: Եվ որպեսզի, նշյալ բարեփոխումները գոհացուցիչ արդյունքներ արձանագրեն, անհրաժեշտ է ժողովրդաիշխանության և դրա ձևերի սահմանադրական զարգացման պատմության խորը ուսումնասիրություններ իրականացնել, ինչը և փորձել է կատարել ատենախոսը:

Ատենախոսության շրջանակներում հեղինակը պատշաճ գիտական խորությամբ ուսումնասիրության է ենթարկել թեմային վերաբերող և՛ հայրենական, և՛ արտասահմանյան գրականությունը, նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաև կատարված սոցիոլոգիական հարցումների տվյալները: Ուսումնասիրելով ժողովրդավարության տարբեր տեսությունները, ժողովրդաիշխանության սկզբունքի սահմանադրական ամրագրման համաշխարհային փորձը, ժողովրդաիշխանության անմիջական ձևերը և դրանց կիրառման իրավական փորձը Հայաստանի երեք Հանրապետություններում, ատենախոսը կատարել է համակողմանի և բովանդակային վերլուծություն:

Հետազոտության արդյունքում ատենախոսի կողմից մշակվել են **գիտական նորույթ** պարունակող տեսական դրույթներ, առաջ են քաշվել ժողովրդաիշխանության անմիջական ձևերի կատարելագործմանն ուղղված գործնական առաջարկներ: Գիտական նորույթ պարունակող պաշտպանության ներկայացված հիմնական դրույթների մեծամասնությունը արժանի է առանձնակի ուշադրության, մասնավորապես՝ XIX դարի հայ քաղաքական-իրավական մտքի՝ ժողովրդավարական բովանդակությամբ առաջանցիկ լինելու հանգամանքը, ժողովրդաիշխանության կենսագործման համար սոցիալական, սոցիալ-քաղաքական, տնտեսական և այլ պայմանների

անհրաժեշտության հիմնավորումը, Հայաստանի երրորդ Հանրապետության հանրային-քաղաքական համակարգի կառուցման հարցում դասական ազատականության ուղղության ընտրությունը, մաժորիտար ժողովրդավարության տեսլականի պահպանողական տարբերակի որդեգրումը, օրենսդրական նախաձեռնության սուբյեկտների շրջանակի լավարկված և հավասարակշռված լինելու անհրաժեշտությունը, ժողովրդաիշխանության անմիջական և ներկայացուցչական ձևերի խելամիտ զուգակցումը և այլն:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը դրսևորվում է Հայաստանի պատմության նորագույն շրջանում ժողովրդաիշխանության տեսական և իրավական պատմության հետազոտմամբ: Ատենախոսության մեջ տեղ գտած տեսական եզրահանգումները կարող են նպաստել ժողովրդաիշխանության անմիջական ձևերի վերաբերյալ տեսական պատկերացումների ընդլայնմանը, ինչպես նաև աղբյուր հանդիսանալ հետագա գիտական հետազոտությունների համար: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել պետության և իրավունքի տեսության ու պատմության, սահմանադրական իրավունքի, պատմաիրավական դասընթացների կրթական ծրագրերի պատրաստման և դասավանդման համար:

Բացի այդ, ատենախոսության մեջ մշակված և առաջ քաշված դրույթները կարող են որպես ուղենիշ ծառայել ժողովրդաիշխանության կատարելագործմանն ուղղված իրավական բարեփոխումների մշակման գործում, ինչպես նաև կարող են նպաստել ժողովրդաիշխանության անմիջական ձևերի իրավական ամրագրման թերությունների վերացմանը:

Ատենախոսության կառուցվածքը թույլ է տվել հեղինակին ամբողջական, համակարգային, բազմակողմանի և ճշգրիտ կերպով լուծել ընտրված թեմայի վերաբերյալ առաջ քաշված խնդիրները: Աշխատանքը գրված է գրագետ, իրավաբանական լեզվով:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ Բարձրագույն Որակավորման Կոմիտեի կողմից հաստատված գիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում հեղինակի

հրատարակված վեց հոդվածները բավարար չափով արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Վերոնշվածի հետ մեկտեղ պետք է արձանագրել, որ աշխատանքը զերծ չէ որոշակի թերություններից, որոնք հանգում են հետևյալին.

1. Պաշտպանության ներկայացված 10-րդ դրույթում հեղինակը փորձել է կառուցել ժողովրդաիշխանության հարցում ապագայի իրավական քաղաքականության հիմնադրույթները /ժողովրդաիշխանության եղած ձևերի լավարկում, չեղածների ամրագրում, ժողովրդավարական սոցիալացում և իրավական դաստիարակություն, ժողովրդաիշխանության պատշաճ ձևերի անընդհատ կիրառում, թոթափելով հանրահավաքային, ցուցարարային, համացանցային խաբուսիկ ժողովրդավարության ահագնացող ալիքը/, որոնցից մեկն էլ առաջարկն է օրենսդրորեն ամրագրել ժողովրդաիշխանության նոր ձևեր: Կարծում ենք, որ այս առաջարկը շատ ընդհանուր է, և հստակ չի երևում, թե ժողովրդաիշխանության ո՞ր ձևերի մասին է խոսքը: Հետևաբար ցանկալի կլիներ, որ ատենախոսը հստակեցներ իր առաջարկությունը:

2. Սկսած 1995 թվականից ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրվեց «Սահմանադրության 1, 2 հոդվածները փոփոխման ենթակա չեն» դրույթը: Այդ պատճառով ՀՀ Սահմանադրության այդ հոդվածները ներառյալ ժողովրդաիշխանությանը վերաբերող հոդված 2-ը մինչև հիմա մնացել է անփոփոխ: Այս կապակցությամբ համաձայն չենք հեղինակի այն տեսակետի հետ, որ Սահմանադրության անփոփոխելի հոդվածներ չեն կարող լինել: Կարծում ենք, որ Սահմանադրության մեջ փոփոխելի և անփոփոխելի հոդվածների կամ դրույթների զուգակցումը՝ որպես իրավատեխնիկական հնարք, շատ կարևոր նշանակություն ունի, քանի որ սահմանադրական կարգավորմանը հաղորդում է ինչպես կայունություն, այնպես էլ ճկունություն:

3. Ինչպես ատենախոսության, այնպես էլ սեղմագրի թվով 5-րդ պաշտպանության հանվող դրույթում հեղինակը ամփոփելով իշխանության փոխանցման կամ իշխանափոխության հիմնահարցը, հիմնավորում է, որ «ազատական ժողովրդաիշխանության «Ժողովրդից, ժողովրդով, ժողովրդի համար» հիմնական սկզբունքից բխում է, որ որոշակի քաղաքական կոնկրետ իրավիճակներում հանրային իշխանության ձևավոր-

ման կամ այն այլ քաղաքական ուժերին փոխանցման ընթացակարգը պետք է լինի ոչ միայն լեգալ, այլև լեգիտիմ: Եթե լեգալության պահանջի պահպանումը ոչ միշտ է հնարավոր՝ կախված քաղաքական-իրավական պայմաններից, ապա լեգիտիմ եղանակը պարտադիր է»: Ինչպես տեսնում ենք, հեղինակը հնարավոր է համարում իշխանության փոխանցման հնարավորությունը նաև անլեգալ եղանակով: Առաջանում է հարցադրում, թե ինչո՞ւ է հեղինակը հնարավոր համարում իշխանափոխությունը կամ նոր իշխանական համակարգի ձևավորումը ոչ լեգալ ճանապարհով: Այդպիսի մոտեցման հետ դժվար է համաձայնվելը: Կարծում ենք, որ հեղինակի դիրքորոշումը լրացուցիչ մեկնաբանությունների կարիք ունի:

Սակայն վերոնշված նկատառումներն ունեն մասնակի և խորհրդատվական բնույթ և չեն կարող ազդել աշխատանքի ընդհանուր դրական գնահատականի և արժանիքների վրա:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան, իսկ հեղինակի կողմից հրատարակված վեց գիտական հոդվածներում լիարժեքորեն արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Հետևություն՝ Ռոզա Անդրանիկի Աբաջյանի «Անմիջական ժողովրդաիշխանության տեսական ակունքների և ինստիտուցիոնալ իրավական ձևերի պատմական էվոլուցիան Հայաստանի նորագույն շրջանի սահմանադրական զարգացման պրակտիկայում» թեմայով ատենախոսությունը իրենից ներկայացնում է արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող ավարտուն և ամբողջական ուսումնասիրություն, որն իր մեջ ներառում է պետության և իրավունքի տեսության, օրենսդրության և պրակտիկայի համար էական նշանակություն ունեցող հիմնախնդիրների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված մոտեցումներ և լուծումներ: Իսկ հետազոտության արդյունքները պետության և իրավունքի տեսության ու պատմության տեսանկյունից ունեն զգալի տեսական և գործնական նշանակություն:

Վերոշարադրյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ Ռոզա Անդրանիկի Աբաջյանի «Անմիջական ժողովրդաիշխանության տեսական ակունքների և ինստիտուցիոնալ իրավական ձևերի պատմական էվոլուցիան Հայաստանի նորագույն շրջանի սահմանադրական զարգացման պրակտիկայում» վերտառությամբ ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման Կանոնակարգով սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.01-«Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետաիրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի՝ 2020 թվականի հունիսի 23-ի նիստում, որին մասնակցել են բաժնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Մ. Ստեփանյանը, գլխավոր գիտաշխատող, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Հ. Սաֆարյանը, ավագ գիտաշխատողներ, իրավաբանական գիտությունների թեկնածուներ Ա.Վ. Շուքուրյանը, Ա.Ա. Աբրահամյանը, Բ.Վ. Ղազինյանը, Լ.Ա. Ղազանչյանը:

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի պետաիրավական
հետազոտությունների բաժնի վարիչ,
իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Հ.Մ. Ստեփանյան**